Արձանագրություն թիվ 5

(նիստը գումարվել է 2023թ. դեկտեմբերի 26-ին)

Նիստին մասնակցում են մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1.Օրակարգի հաստատում:

(հաղ.՝ տնօրեն Ա. Սարուխանյան)

2. 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Կիրակոսյան)

3. Բացակայությունների հաշվետվություն:

(զեկուցող՝ Ա. Կիրակոսյան)

4. Մեթոդմիավորման նախագահների և խմբավարների աշխատանքների հաշվետվությունները:

(զեկուցողներ՝մ/մ նախագահներ, խմբավարներ)

5. 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակում 12-րդ դասարանում ուսումնական առարկաների ժամաքանակի բաշխում:

(հաղ.՝ տնօրեն Ա. Սարուխանյան)

Օրակարգում՝

Լսեցին – 1.Տնօրեն Ա. Սարուխանյանի հաղորդումը օրակարգի մասին :

Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Հաստատել օրակարգը:

Լսեցին- 2. 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփման մասին Ա. Կիրակոսյանի զեկուցումը:

Նա նշեց, որ տարվա սկզբում 216 աշակերտ, կիսամյակի վերջում 220, գնահատվել են 204-ը, առաջին դասարանը չի գնահատվում, տեղափոխվել են 5-ը, եկել են 9-ը, գերազանցիկները 8-ն են, ունենք 50 հարվածային, 5 անբավարար: Նվազել է գերազանցիկների թիվը և տենդենցը նկատվում է տարրական դասարաններում, 7-9 – րդ դասարաններում գերազանց աշակերտ չունենք, 11-րդ դասարանում մեկն է

գերազանցիկ: Դրված գնահատականների քանակը քիչ է, բնագիտամաթեմատիկական օլիմպիադայի դպրոցական փուլում անցողիկ շեմը հաղթահարողներ չունենք:

Արտահայտվեց մաթեմատիկայի ուսուցչուհի Լ. Բեդոյանը, նա նշեց, որ 7-րդ դասարանում ունենք խնդիր՝ կապված մաթեմատիկայի հետ, և անհրաժեշտ է մշակել ուղիներ ախտորոշելու և լուծումներ գտնելու, որակը բարձրացնելու ուղղությամբ:

Արտահայտվեց ռուսերենի ուսուցչուհի Ա. Հակոբյանը, նշեց, որ Հակոբյան Վարշամը և Հայկյան Գևորգը ստացել են անբավարար, որը կապված է կրթության նկատմամբ անտարբեր վերաբերմունքի:

Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Թիրախային դարձնել 7-րդ դասարանի մաթեմատիկան, աշխատանք տանել կրթության որակը բարձրացնելու համար:

2.Հետևողական լինել կրթության որակի բարձրացմանը, ուշադրություն կենտրոնում պահել ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաներին, տանել լրացուցիչ աշխատանքներ անբավարար գնահատականներ ունեցողների հետ:

Լսեցին- 3. Կիրակոսյանի զեկուցումը 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի բացակայությունների մասին

Նա նշեց, որ ամենաշատ բացակայությունները նկատվել են 8-րդ դասարանում, նա առանձնացրել էր առավել շատ բացակայած աշակերտների անունները:

N	ԱՇԱԿԵՐՏ	ԲԱՑԱԿԱ ԺԱՄԵՐԸ	ԴԱՍԱՐԱՆԸ
1.	Մարտիրոսյան Կարինե	98	XI
2.	Փանոսյան Հրաչյա	65	XI
3.	Սարգսյան Առնակ	59	XI
4.	Մարտիրոսյան Ժորա	56	VIII
5.	Մարտիրոսյան Սևակ	53	X
6.	Մարտիրոսյան Արևիկ	51	VIII
7.	Հակոբյան Արմինե	45	VII
8.	Հակոբյան Ջուլիետա	42	VIII
9.	Յոլչյան Մերի	42	X
10.	Մարգարյան Արամ	41	X
11.	Ավագյան Գոռ	40	XI

Ներկայացրեց նաև բացակայությունների տվյալներն ըստ դասարանների:

N	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	ԲԱՑԱԿԱ ԺԱՄԵՐԸ
1	XII	408
2	XI	398
3	X	287
4	IX	276
5	VIII	128
6	VII	126
7	VI	113
8	V	100
9	I V	79
10	III	62
11	II	41
12	I	5
Ընդամենը 2023		

Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Հանձնարարել դասղեկներին հետևողական լինել բացակայող աշակերտների նկատմամբ:

2. 50 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտների ծնողներին ծանուցագիր ուղարկել:

Լսեցին – 4. Մեթոդմիավորման նախագահների և խմբավարների աշխատանքների հաշվետվությունների մասին մ/մ նախագահների, խմբավարների զեկուցումները:

Արտահայտվեց Շ. Ալավերդյանը, նա նշեց, որ 1-ին կիսամյակում արվել է 5 նիստ, լսվել են զեկուցումներ, արվել են բաց դասեր, դասալսումներ, ստուգվել է ընթերցանության տեխնիկան՝ Հավելված 1:

Արտահայտվեց Լ. Մացականյանը, նշեց, որ մեթոդմիավորումը կազմված է երեք անդամներից, ՆԶՊ ուսուցիչը հանդես է եկել զեկուցումներով, Ա. Կարապետյանը կազմակերպել է բաց դասեր, արձանագրել է 5 նիստ: Քննարկվել է <<Իմ հայրենիքը>> առարկայի դասագրքի բացակայության հարցը՝ Հավելված 2:

Արտահայտվեց Կ. Ասատրյանը, նա նշեց, որ քննարկվել է 5-7-րդ դասարաններում ՀՊՃ – ի ծրագրերը, 2-րդ կիսամյակում նախատեսվել են միջոցառումներ և նախագծեր, լաբորատորիան համալրվել է նոր գույքով, արվել է 5 նիստ, լսվել են զեկուցումներ աշխարհագրությունից՝ Հավելված 3:

Արտահայտվեց Լ. Բեդոյանը, նշեց, որ ունեցել են 5 նիստ, որից 2-ը սեպտեմբերին՝ կապված անդամների կազմի փոփոխության հետ, 2-րդ կիսամյակում նախագծային աշխատանք իրականացվելու է ինֆորմատիկայից, քննարկվել է 7-րդ դասարանի ցածր որակը՝ Հավելված 4:

Արտահայտվեց Մովսիսյանը, նա նշեց, որ նախագծային աշխատանքը ներկայացվել է անգլերենից, զեկույցով հանդես է եկել Ա. Հակոբյանը, ռուսերենից նախագծային աշխատանք նախատեսվել է իրականացնել 2-րդ կիսամյակում: Մեթոդմիավորման մեկ ուսուցիչ՝ Ա. Հակոբյանը, անցել է կամավոր ատեստավորումը՝ Հավելված 5:

Արտահայտվեցին խմբավարներ Ծատուրյանը, Փարսիլյանն ու Մնացականյանը, նշեցին, որ աշխատել են հաստատված ծրագրով, կիսամյակի վերջում հանդես են եկել ամանորյա միջոցառմամբ՝ Հավելված 6:

Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. 2-րդ կիսամյակում հետևողական լինել իրականացվող աշխատանքներին և պլաններին, որպեսզի կատարվեն ժամանակին:

Լսեցին – 5. 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակում 12-րդ դասարանում ուսումնական առարկաների ժամաքանակների բաշխման մասին տնօրեն Ա. Սարուխանյանի հաղորդումը:

Նա նշեց, որր ըստ կարգի՝ մինչև դեկտեմբերի 1-ը 12-րդ դասարանի 6 աշակերտներ ներկայացրել են դիմումներ՝ նշելով այն առարկաները, որոնք պետք է ուսումնասիրեն 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում: Դիմումների համաձայն՝ կազմվեց առարկաների հետևյալ ցանկը՝ ֆիզկուլտուրա, ՆԶՊ, կենսաբանություն, ֆիզիկա, երկրաչափություն, հանրահաշիվ, աշխարհագրություն, հայոց պատմություն, անգլերեն, հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, որը պետք է ընդգրկվի 2-րդ կիսամյակի դասացուցակում:

Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1.Հանձնարարել Ա. Կիրակոսյանին կազմել 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի դասացուցակը՝ ընդգրկելով նշված առարկաները:

2. Հանձնարարել ուսուցիչներին 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանները համապատասխանեցնել ուսպլանին:

Մնակավարժական խորհրդի նախագահ՝ Ա. Սարուխանյան

քարտուղար՝ Ս. Զարգարյան